

L5n

715-718, 2347

1999

իր ամենայ Արքայ Գևառապետ  
աշխ ձերակի 30/18 1900 թվական

ՅԵՐԱԿԱԹԻՒՆ ԹՈՒՄԱՆՆԵՐՆ



**ԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ**

I

ԳՐՔՈՑԿ

- |    |                   |
|----|-------------------|
| a) | ԿՆԵԱԶԻ ՇՈՇԿԵՆ     |
| b) | ՍԱՏԱՆԱՑ ԲՈՒՌՈՂՆԵՐ |

Թ. Ի Ֆ Լ Ի Ս  
Տու, Վլաց Հրատ. Ընկ. || Տիպ. Գրադ. Իզդ. Տ—վա.

1899

Ի Մ Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ն Ե Ր Ի Ն.

Երբ «Կնեազի շաշկէն» լոյս տեսաւ «Տարա-  
դում», Դուք առաջարկեցիք ինձ հրատարակելու այս  
գրւածքը առանձին գրքոյկով։ Այսօր ամենայն սի-  
րով կատարելով Ձեր առաջարկը, «Կնեազի շաշկէն»  
զետեղեցի իմ «Հանաք ու Դանակ» հրատարակու-  
թեան I գրքոյբում։ Լիայոյս եմ, որ իմ բարեկամ-  
ները կը տարածեն «Հանաք ու Դանակը» իրանց  
շրջաններում և այդպիսով միջոց կը տան ինձ հրա-  
տարակելու և իմ միւս գրքերը։

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Дозволено цензурою. Тифлесь, 24 декабря 1898 года.

4716.60

28.716

卷之三

孫子兵法卷第十一 訓練篇

## ԿՆԵԱԶԻ ՃՈՃԿԵՆ

II

Կիրակի Երեկոյ էր:

Թիֆլիսի լայտնի վաճառական Խսալ Մար-  
կարէց Թաթուլովը, սրելով ճերմակ բեղերը,  
մօտեցաւ մի երկարկանի տան և սկսեց զան-  
գահարել։ Չ'անցաւ երկար միջոց, դռան շէմ-  
քին երեաց սպիտակ չերքէզկով մի ջահէլ  
իմերէլ ծառայ։ Իմերէլը՝ Թաթուլովին տես-  
նելուն պէս՝ իսկոյն գլուխը շարժեց բացա-  
սապէս, հասկացնելով, որ տէրը տանը չէ։

—Կանեազը շուտ կըգայ? ՀարցըԵց վաճառականը:

— զը գիտեմ, աղա, պատասխանեց ծառակ:

—Բաս չը գիտես, թէ ուր է գնացել?

—զիտեմ, աղա:

— Հայրաթ էին քեզի է գնացել, հա?

—զր գիտեմ, աղա:

—Իսկ տնից երբ դուքս գնաց?

— Զը գիտեմ, աղա:  
 — Ինչպէս թէ չը գիտես... բաս դու ուր  
 էիր, որ նա դուրս գնաց?  
 — Զը գիտեմ, աղա:  
 — Տօ, խելքի տոպրակ, դու չը գիտես՝  
 թէ դու որտեղ էիր?  
 — Զը գիտեմ, աղա:  
 — Տօ, դու խօմ գիժ չես?  
 — Զը գիտեմ, աղա:  
 — Ո՛յ դու չոռ գիտենաս ու ցաւ գիտե-  
 նաս... Տօ, սարսաղ, բաս աշխարհիս երեսին  
 դու իսկի բան չը գիտես?  
 — Զը գիտեմ, աղա:  
 — Դէ կորիր, ռադ եղիր! Ես քո աղին  
 ինչ ասեմ, որ քեզ պէս հայւաններին ծա-  
 ռանց է բռնել!  
 Թաթուլովը բարկացած ներս հրեց ծա-  
 ռալին, դուռը փակեց և փնթփնթալով հե-  
 ռացաւ: Ծառան ժպտալով վեր էր բարձրա-  
 նում, երբ պատշգամբի կիսաբաց դռնից ծկտի  
 տւեց իշխան իլիկո Բօզբաշիձէն:  
 — Հը, Կօտէ, գնաց?  
 — Հրամելէս, կնեազ, գնաց, պատասխա-  
 նեց ծառան:  
 — Ինչ ասացիր?  
 — Ինչպէս որ Կարապետը սովորացրել

է բոլոր հարց ու փորձին պատասխանում էի  
 « չը գիտեմ, աղա»:  
 Այստեղ իշխան իլիկոն գովեց իր ծառա-  
 լին և պատւիրեց, որ միշտ ալդպէս պատաս-  
 խանի բոլոր պարատէրերին:  
 Բանն այն էր, որ իշխանը մի քանի տա-  
 րի առաջ մի արծաթապատ թուր էր գրաւ-  
 դըել Թաթուլովի մօտ: Բայց գրպանները ծակ  
 լինելու պատճառով նա չէր կարողանում թափէլ  
 իր գրաւը, չը նայելով որ Թաթուլովը շուտ-  
 շուտ դիմում էր նրան և պահանջում պարտ-  
 քը: Զբօսասէր Բօզբաշիձէն միշտ էսօր-էգուց  
 էր գցում և չըգիտէր՝ թէ ինչպէս աղատւի  
 Թաթուլովի ձեռքից: Կարապետը, որ միշտ  
 փոր պահելով էր կառավարում ագխարհիս  
 երեսին, յաճախ գալիս էր իշխանի տուն և  
 օգտում նրա սեղանից: Ինչպէս ընթերցողը  
 տեսաւ, ալդ զոյդ-զոյդ « չլոգիտամք նիկը թա-  
 րապետի գլխից էին դուրս եկել նարա-  
 պետը լիսուն տարեկան, երեսը թրաշած,  
 կաբան ու չուխան հագած մի հացկատակ  
 թիֆլիսեցի էր:

— Հը, Իսայի Մարկարիչ, էդ որտեղից  
 ես գալիս էդպէս չարացած? Հարցըց Թա-  
 թուլովին նրա ծանօթ վաճառականներից մէ-  
 կը, որ անցնում էր Միջի-Փողոցով:

— Ախպէր, խաթա-բալա է էլի! բանը  
բերում են, գրաւ դնում մի ամիս ժամանա-  
կով. անց է կենում վեց ամիս, մի տարի,  
հինգ տարի, խնդրում ես, ասում ես, բայց  
չէք մի կոպէկ չի մտնում: Խնդրելով ու ա-  
սելով էլ բեզարեցի. ուրիշ մարդ որ լինէր  
ինձ տեղ, հիմա խնդրելուց ու ասելուց նրա  
լեզուն մաշած կը լինէր: Հազար անդամ ես գը-  
նացել եմ նրա դուռը ու եկել: Նրա խաթ-  
րու էլ տարեկան մի ջուխտ սասլոկ աւել  
ենք մաշում գնալ-գալով:

— Մէկ ասա, տեսնեմ ով է, ով?

— Այ, կնեազ Բօզբաշիձէն: Աստւած գի-  
տենալ, եթէ կնեազ չը լինէր, փողոցումը կը-  
խայտառակէի. բազարում ոսկէ գօտին լեռ  
կ'անէի մէջքից:

— Է, դրանք սոված կնեազներ են, սո-  
ված! Դրանցից փող չի դուրս գալ:

— Բաս էս բեզս էստեղ չըլինի, թէ ես  
էդ փողերը դուրս չը հանեմ... ինձ Իսայ  
Մարկարիչ կ'ասեն, գիտես? թէ ես մի ֆան-  
դով փողս չըստանամ, ես մարդ չեմ լինել:  
Դեռ դու սպասիր. թուրքն ասում է.

«Ճիշնուրի ձենը էզուց դուրս կըդալ»:

II

Անցել էր մի քանի օր: Կարապետը փո-  
ղոցով անցնելիս, կանգ առաւ Թաթուլովի  
խանութի առաջ և հեռւից բարեեց Իսայ  
Մարկարիչին: Վերջինս Կարապետին տեսնե-  
լուն պէս, ներս կանչեց նրան մի քանի ըո-  
պէով:

— Կարապետ ջան, ախար մի խաթա է  
եկել գլխիս... ըզդիտեմ, թէ ոնց անեմ, —ա-  
սաց Թաթուլովը տխուր գէմքով:

— Հը, ապրանքդ խօմ բաթմիշ չի եղել  
ջրի մէջ?

— Զէ, ուրիշ բան է... որանից մէ քա-  
նի տարի առաջ...

— Կարելի է կասսագ կոտրել են?

— Զէ, ուրիշ բան է... էն տարուն, որ  
խօլերա կար, ես...

— Կարելի է, տունդ պաժար է ընկել?

— Զէ, էդ չէ իմ ասածը: Խօլերի տա-

րուն ես...

— Կարելի է, բճերքդ ապրանք են գո-

ղացել?

— Զէ, էդ էլ չի. ուրիշ բան է... Խօլե-  
րօքի ժամանակ ես...

— Կարելի է կնիկդ ջուխտ աղջիկ է ծնել?

— Զէ, Աստւած ոչ անի. Էդպէս բան  
չը կայ... Են տարուն, որ խօլեր կար, ես...  
— Կարելի է սուտ շառեր են մօգօնել  
քեզ վրայ?

— Զէ, ուրիշ է իմ ասածը... Խօլերի  
տարուն ես...

— Կարելի է...

— Վահ, ինչ ես զահլա տանում? Զես  
թողնիլ մարդու բերանից խօսք դուրս դայ,  
փիէ!

— Դէ, ասա, ասա. ես սուս կը կենամ...  
էլ մի չարանալ!

— Հա, էն էի ասում, շարունակեց Իսայ  
Մարկարիչը. — Խօլերի ժամանակ կնեազ Իլիկօ  
Բօղբաշիձէն...

— Օ, դա իմ լաւ բարեկամն է:

— Գիտեմ, որ դու շուտ-շուտ նրանց  
տունն ես գնում... Հա, խօլերօբի ժամանակ,  
ես...

— Համա լաւ տղալ է, գիտես?

— Գիտեմ, գիտեմ... Հա, խօլերի տա-  
րուն էդ կնեազը...

— Լաւ քէֆ անող է, գիտես?

— Գիտեմ, գիտեմ... Հա էն էի ասում.  
Խօլերի տարուն էդ Իլիկօն...

— Համա շատ դարդիմանդ հոգի է, գիտես?

— Գիտեմ, գիտեմ... Հը... ինչ էի ա-  
սում, մոռացայ? Հա... խօլերի տարուն դա  
ինձ մօտ...

— Շատ աղ ու հացով հոգի էլ է, գի-  
տես?

— Վահ, էէ! Աբա թէ թողնի մի խօսք  
ասեմ:

— Դէ, ասա, ասա... ես սուս կըկենամ...  
Տեսալ որ տխուր ես, մի քիչ հանաք արի,  
որ սիրտ բաց լինի:

— Վահ, սաղ մի սահաթ է, չես թող-  
նում խօսքս վերջացնեմ ու ասում ես թէ՝  
հանաք արի? Հէր օխնած, ինչ հանաքի ժա-  
մանակ է, մէկ իմ սրտին էլ հարցըու է!

— Լաւ, լաւ, էլ մի չարանալ, ասա!

— Ով որ մէշատ անի?

— Պարտական մնայ!

— Ամէն!

— Եւ ընդ հոգորդ քում:

Իսայ Մարկարիչը վերջապէս խոստովան-  
եց Կարապետին, որ կնեազ Բօղբաշիձէի գը-  
րաւ դրած թուրը կորցրել է և վախենում  
է, որ մի գուցէ կնեազը հանգամանքից օ-  
գուտ քաղելով, կորցրած գըրաւի գինը մէկին  
հինգ պահանջի:

— Ես խօսքը մեր մէջ մնալ, աւելացրեց

Թաթուլովը, — չը լինեմ, չիմանամ, որ էս բա-  
նը կնեազի ականջը գցես:

— Զէ, երեխայ խօմ չեմ? Ինչի, դու ինձ  
նոր ես ճանաչում? Զես իմանում, որ ես խա-  
բարբզանութիւն չեմ սիրում? պատասխանեց  
Կարապետը:

— Ես էլ քեզ ճանաչում եմ ու էնդուր  
եմ ասում:

Այդ րոպէին ներս մտաւ խանութը մի  
պարոն իր տիկնոջ հետ միասին: Կարապետը  
մնաք բարով ասաց և հեռացաւ:

### III

Միւս օրը կէսօրին իլիկօ Բօզբաշէնէն,  
խալաթը հագին իր կացարանում թէք ըն-  
կած գահաւորակի վրայ, մտածում էր: Սե-  
նեակի կահ-կարասիքը անկարդ դըութեան  
մէջ էին: Իշխանը պիտի տանից դուրս գը-  
նար, որ Կօտէն տունը հաւաքէր և իրերը  
կարգի բերէր: Սեղանին ընկած էր իշխանի  
գաշոյնը իր գօտիով. մի աթոռի վրայ ընկած  
էր նրա չերքէզկան իր տրծաթապատ մաս-  
րաներով և մետաքսէ արխալուխը. իսկ պա-  
տուհաններից մէկի վրայ գրած էր նրա ըս-  
պիտակ մորթէ գլխարկը: Անկողինը խճճւած  
էր և անկարդ: Երիտասարդ իշխանի մազերը

զզզզւած էին, իսկ աչքերը պղտոր: Նախորդ  
զիշերը նա Տիլիպուճուրումն էր եղել: Նա  
թէք ընկած՝ ծխում էր և մտածում անցկաց-  
րած ժամանակի ու գինեխմութեան մասին:  
Իսկ այդ ժամանակ խոհանոցում Կօտէն ինք-  
նաեռ էր պատրաստում:

— Բաս ասում ես, կնեազ, իսկի Կարա-  
պետը չի գալիս. — Ժպիտը բերանին ասաց Կա-  
րապետը, լանկարծ ներս մտնելով:

— Ինչի, սաղ օրը էստեղ ընկած չես?  
պատասխանեց կնեազը, գլուխը բարձրացնե-  
լով:

— Ո՛, կնեազ ջան, որ իմանա՞ թէ ինչ  
լաւ խաբար եմ բերել, ճշմարիտ, բերանս կը-  
պաշէս:

— Հը? ասաւ տեսնենք! ասաց Իլիկօն լո-  
րանցելով ու ձգձգւելով:

— Փողի ու քէփի խաբար է, գիտես?

— Ասա, ասա! Օրհնւի քո բերանը!

— Շուտով բոլ վիզ պիտի ստանաս:

— Որտեղից, ումնից? ասաց Իլիկօն նըս-  
տելով:

— Բայց գիտես, կնեազ, ես խաբարբզան  
մարդ չեմ. համա քեզ շաա եմ սիրում ու ա-  
մեն անգամ քո բարին եմ ուզում: ու խա-  
ռաւ, էլ մի երկարացը:

— Օղորմած հոգի քո հալըն էլ իմ լաւ դօստն էր ու ինձ շատ էր սիրում։ Խսկի մըտքիցս դուրս չի գնում. ասես՝ հէնց երեկ էր, երբ նա քեզ հագցնում էր կարճ կաթան, դեղին ծուղէքը, մախմուրի արխալուղը, պստիկ բուխարի փափախը. մէջքդ կապում էր արծաթի, պստիկ մէթիքա խանջալը, ոսկէ թոխկան ու ամեն իրիկուն կուռդ բունած՝ տանում էր բուլւարը...

— Եդ բաները հազար անգամ ասել ես. դու խօսքդ ասա!

— Դու դեռ պստիկ երեխայ էիր, երբ ես ձեր օջաղը ճանաչում էի... Միտդ է, կը-նեազ? պստիկ ձեռներդ մօտեցնում էիր բերանիս ու ուզում էիր բեղերս քաշքան, ես էլ խոզի պէս մէքաշ «վըըիկ!»։ Դու էլ վախենում էիր—ձեռներդ քաշում, ուրախանում, թռչում ու ծիծաղում...

— Դէ, էլ սատանի մասլահաթ մի սարքիւ, թէ չէ վեր կըկենամ ու էն խանջալը կըկոխեմ վորդ։

— Յետոյ քեզ ով կ'ասի էս ուրախալի խաթարը? Լաւ, լաւ. էլ մի չարանար, ասում եմ։ Համա խստ շեշտրանգի խաթար է, գիտես? Ես քեզ սիրում եմ, կնեազ, էնգուր եմ ասում։ Գիտես, կնեազ, աշխարհքիս երեսին

շատ օքմին կայ, որ երեսիդ ծիծաղում են, քաղցը-քաղցը խօսում, սիլի-բիլի անում ու յետոյ գնում քո յետեկից հազար բամբասանք, հազար ուշունց...

— Թէ Աստած կըսիրես, խօսքդ ասա, թէ չէ համբերութիւնս մի հատացըու։

— Համա, կնեազ, ես էդ թաւուր օքմինին ուրիշ անուն չեմ կարայ տալ—սև սատանայ, խոզի որդի, հասկանում ես, կնեազ, խոզի որդի?

— Հասկանում եմ, հասկանում—խոզի որդի։ Թէ ախաղէր ես, վերջացըու։

— Օխնած, ոնց ես քո մօր փորումը ինն ամիս համբերել... իցուն տարեկան մարդ եմ...

— Դէ, խալխին ճլերք մի զցի, խօսքդ ասա!

— Բուկս չորացել է, մինչեւ մի թաս աքաղ չը խմեմ, էս թաւուր խաթարը չեմ կարայ ասել։

— Արաղը էնտեղ է, արաղը էնտեղ է, ասաց կնեազը համբերութիւնը հատած եցուց տւեց դէպի պահարանը։

— Ես տեղը գիտեմ, ես խամ չեմ, — ամաց կարապետը մօտենալով պահարանին և հանելով օղիի շեշը։

Կարապետը լցրեց բաժակը և ասաց.

— Կնեազ, քո կենացը! Աստւած տայ,  
որ մեր սէրը, բարեկամութիւնը անվերջ մը-  
նալ! ինչ որ սրտումդ ունիս, Աստւած լսի  
ու կատարի!

— Ենորհակալ եմ, անուշ արա:

— Աստւած քո օջախը հաստատ պահի!  
կենդանութիւն! կնեազ, ձեր հրամանոց պայ-  
ծառութիւնը!

— Ենորհակալ եմ. շուտով խմի ու խօս-  
քը ասա:

— Օդորմած Աստւածը աջողի քո գործը,  
ոնց որ հիմի աջողել է. բարով ամեն մուրազիդ  
էլ հասնես: Հախմիածինը իմ վերջն էլ բա-  
րի անի...

— Դէ, զահլէս մի տանի, թէ չէ ստա-  
քանը գլխիդ կը խփեմ!

— Վահ, ես իմ բերանի լազաթը կըտ-  
րեմ, թէ քո էշը խրտնում է! Տէր Աստւած,  
Քեզ փառք: Կնեազ, ողջ լինիս ու Աստւած  
քեզ համբերութիւն տալ!

Նարապետը դատարկեց բաժակը, նորից  
լցրեց և դրեց սեղանին:

— Հա, էն էի ասում, կնեազ... Համա-  
ինչ որ պիտի ասեմ, մեր մէջ մնալ, թէ չէ  
կ'ասեն Կարապետը խաբարբգան է:

— Լաւ, լաւ, ոչ ոքի չեմ ասիլ... դու  
խօսքդ ասա!

— Էս էլ կը լիշենք էն մարդու կենացը,  
— շարունակեց Կարապետը, օղիի բաժակը  
ձեռքն առնելով:

Կնեազը բարկացած վեր թռաւ տեղից,  
մօտեցաւ Կարապետին և ձեռքովը սեղմելով  
նրա բերանը՝ արգելեց խօսելու:

— Լաւ, լաւ... ասաց Կարապետը, մի  
կերպ ազատելով բերանը Իլիկօլի ձեռքից,—  
էլ չեմ խօսում. խմեմ ու ասեմ! Էս, կնեազ,  
կենդանութիւն!

Կարապետը դատարկեց բաժակը: Այդ րո-  
պէին ներս մտան Իլիկօլի ընկերները՝ Գա-  
թիկօն և Նիկօն, երկուսն էլ բարձրահասակ,  
մէջքները պինդ սղմած, կօխտա կնեազներ:

#### IV

Կարապետին տեսնելուն պէս, երկու  
իշխանները սկսեցին նրան քաշքանել, չարչա-  
րել ու ծաղղել: Կամ նրա մերկ կատարին էին  
չըմփացնում, կամ բեղերն էին քաշքում,  
կամ կուռը բռնում էին դէս ու դէն գցում:  
Կարապետի տրտունջին և աղաղակին նրանք  
բարձրաձայն ծիծաղով էին պատասխանում:  
Վերջապէս իշխան Բօղբաշիձէն մէջ ընկաւ և

Հանգստացրեց ընկերներին, յալտնելով որ Կա-  
րապետը նոր լուր ունի հաղորդելու:  
— Իմ արևը գիտենայ, քէփս գալիս է,  
երբ ձեզ տեսնում եմ, — ասաց Կարապետը  
կնեազներին, — մէկ օր որ ձեզ չեմ տեսնում,  
կ'ասես ջէթիցս հազար թուժան վեր է ընկել  
ու կորել:

— Տօ, մասխարա, քո ջէթումը իսկի մի  
ծակ կոպէկ կայ, որ վեր ընկնի? ասաց Նի-  
կօն:

— Այ, էդ լեզուդ ուտեմ է, կնեազ! իմ  
արևը գիտենայ, քէփս գալիս է քո էդ խօ-  
սելուց:

— Կարապետի ջէթումը մենակ մկներն  
են արթուրմա խաղում, — աւելացրեց Դաթի-  
կօն:

— Զանդ սաղ լինի! պատասխանեց Կա-  
րապետը, — իմ ջէթի մկները ինչքան կուզեն,  
թող տրտինդ տան, իսկ ձեր ջէթումը թող  
թուղթ փողը խշխայ: Ես էլ ձեր դովլաթու-  
մը կըլւամ...

— Թէ Սատւած կը սիրէք, թող խօսքն  
առի, — մէջ մտաւ Դիկօն:  
— Հը! քաջալ! էլ չ'երկարացնեսայ, թէ չէ  
ինձ խօճանաչում ես? — սպառնաց Դաթիկօն:  
— Կարճ կարի, — աւելացրեց Նիկօն, — թէ

չէ գլուխոդ էնքան կը ծեծեմ, որ էլ տոսլրակ  
չի մտնիլ:

— Ախպէր, ասում եմ, ասում... մի բու-  
կըս թրջեմ ու ասեմ:  
Կարապետը մօտ եկաւ օղիի շշին, ըալց  
կնեազները արգելեցին.

Վերջապէս Կարապետը սկսեց պատմել.

— Կնեազ, խօլերի տարուն էն շաշկէն,  
որ գրաւ գրիր թաթուլովի մօտ, էն շաշկէն...

— Հա, հա, յետոյ? ասաց Դիկօն:  
— Մենք էլ էնտեղ էինք, — ընդմիջեցին  
Նիկօն ու Դաթիկօն, — քսան մանէթով գրաւ  
գրեցինք:

— Էն շաշկէն, — շաբունակեց Կարապե-  
տը, — համա, կնեազ, քեզ սիրում եմ և էն-  
դուր, եմ ամում, էն շաշկէն... համա, կնեազ,  
թէ որ իմ զադըրը չ'իմանամ, իմիստ բեդամաղ  
կը լինեմ... էն շաշկէն, ասում է, չըգիտեմ,  
ասում է, դրել էլ դուքսանի խավազի տա-  
կին, ասում է, գնացի, ասում է, տեսալ  
չըկայ ու չըկայ, ասում է... Հայ գէս, հայ  
գէն շաշկէն չըկայ ու չըկայ, ասում է, կո-  
րել է, ասում է...

— Էդ է քո խալեարը? Հարցրեց Նիկօն  
բարկացած, — տօ, շաշ! տօ, տօ, սարսաղ!  
դրա համար էիր ինձ էսքան չարչարում? ջա-

Հանդամը քո գլուխն էլ, Թաթուլովի գլուխըն էլ!

—Վահ!—զոչեց Կարապետը զարմացած:

—Զահըռումար! ինչ մի մաթահ բան է կորել, որ դու սաղ մի սահաթ ինձ ճկերք գցեցիր? Աստուծոյ ողորմութիւնն է, որ կորել է, ես էլ հենց էդ էի ուզում, թէ չէ ամեն օր Թաթուլովը զահլաս տանում է:

Այստեղ երեք կնեազներն էլ սկսեցին մեղադրել Կարապետին և նրան չարչարել: Կարապետը, որ բոլոր ժամանակ լուռ էր, բացականչեց.

—Խելք եմ ասում, հա! էլ, կնեազներ, դուք դեռ շատ ջահէլ էք երևում!... քէփներիդ չը դիպչի խօսքս, դուք դեռ շատ խամ էք ու դեռ շատ հաց պիտի փշացնէք, որ աշխարհքիս խէրն ու շառը հասկանաք!

—Ինչ, ինչ, ինչ?

—Այ թէ ինչ,—ասաց Կարապետը, —էն կորած շաշկի տեղ կնեազը հիմի կարայ Թաթուլովի աչքը հանի ու պօլիցով, սուդով, զակօնով նրա արժէքից հինգ անգամ աւելի պահանջի, քսան անգամ աւելի պահանջի... մի խօսքով ինչքան կնեազի սիրտը ցանկանալ: Առաջ կնեազը խօսքով կըփորձի. թէ որ չ'ելաւ, էն ժամանակ կըդնայ սուդը:

—Տօ, դորի՛ է ասում, գիտես.—ասացին կնեազները ապշած:

—Բաս դուք էնպէս էք կարծում, թէ Կարապետը իսկի բան չի հասկանում, հա?— ասաց Կարապետը պարծենալով:

—Կարապետ ջան, օղորմի քո հօրը,— վրայ բերեց հօգբաշիձէն:

—Համա լաւ գօգրա ունիս, Կարապետ, Աստւած գիտենալ! աւելացրեց նիկօն:

—Էդ բանը իսկի մեր խելքին չէր գալ!— ասաց Թաթիկօն:

—Ես էլ գիտեմ, որ ձեր խելքին չէր գալ.

—պատասխանեց նոյն պարծենկոտութեամբ Կարապետը.—Էդ ամեն մարդու խելքի բան չէ:

Յետոյ Կարապետը հայերէնից թարգմանեց.

«Թանա, մածուն չի, ամեն մարդու բան չի»:

V

Կնեազ իլիկօն, որ տռանց այն էլ փողի պակասութեան մէջ էր, մանուկի նման սկսեց հըճւել: Կարապետի բերած լուրը նիկօյին և Թաթիկօյին էլ ուրախութիւն պատճառեց:

—Համա գիտէք, թէ խեղճ Թաթուլովը ոնց էր վախենում!—շարօւնակեց Կարապետը,

— «Խօսքը մեր մէջ մնայ, Կարապետ, ասում  
է, մի խաթա է եկել գլխիս, ասում է, հիմի  
չը գիտեմ, թէ ոնց պրծնեմ կնեազի ձեռքից,  
ասում է»...

— Այ մի քսան մանէթ փող ունենալի!  
— բացականչեց Իլիկօն, ուրախ-ուրախ ձեռ-  
ները միմեանց շփելով.— Հենց հիմիսկեթ  
կըտանէի ու կ'ասէի... «ախպեր, Ես քո փողը,  
իմ շաշկէն լետ տուր»...

— Հա, շատ լաւ ես մտածել, — ասաց  
Կարապետը, — Էյ, կնեազներ! Ել որ օրւայ  
համար էք? — շարունակեց նա, դիմելով նի-  
կոյին և Դաթիկոյին:

— Ես սահաթիս ես էլ ձեռիս փող չ'ու-  
նիմ, — պատախանեց Նիկօն, — թէ որ էդ  
բանը սրանից մի հինգ օր առաջ լինէր, —  
հարիւր մանէթ էլ կարող էի տալ:

— Ես էլ էս սահաթիս փող չ'ունիմ,  
համա մի երկու ամսից լետոյ ստանալիք ու-  
նիմ. — աւելացրեց Դաթիկօն:

— Էլ փողը ինչ հարկաւոր է, Կարա-  
պետ? — ասաց Իլիկօն, — խօմ մենք չենք նրան  
տալու նա պէտք է մեզ տայ:

— Հա դրուստ է, դրուստ է! — շեշտեցին  
միւս կնեազները:

Կարապետը, որ Թաթուլովին խօսք էր

տւել, ոչ ոքի բան չ'ասել կորցրած թրի  
մասին, մնացել էր շւարած: Նա վախենում  
էր, որ մի գուցէ իշխանը դատարկ ձեռքով  
գնալ ու պահանջի իր թրի գինը և այդ-  
պիսով բացւի նրա խաբարբանութիւնը: Նա  
սկսեց համոզել Իլիկօլին, որ մի կերպով ճա-  
րի քսան մանէթ և միամտաբար ներկայանայ  
Թաթուլովին, անիօս փողը դնի նրա առաջ  
և պահանջի իր թուրը: Իսկ եթէ իշխան:  
առանց փողը ցոյց տալու պահանջի իր գրա-  
ւը, նսայ Մարկարիչը կարող էր կասկածել  
Կարապետի վրայ: Կարապետը չէր ուզում նրա  
աչքից ընկնել, որովհետեւ երբեմն փոր էր  
պահում նրանց տանը: Իր գործը աւելի հիմ-  
նաւոր բռնելու համար, Կարապետը սկսեց  
ասել, համոզել, լորդորել, որ կնեազը ան-  
շուշան ներկայացնի փողերը: Կնեազ Բօղբաշե-  
ձէն, որ երկար մտածելու սովորութիւն չ'ու-  
նէր, շուտով թեքւցաւ Կարապետի կողմը:  
Միւս կնեազներն էլ, որոնք հնարագէտ Կա-  
րապետին ալդպիսի գործերում առհասարակ  
աւտօրիտէտ էին ճանաչում և նրա ասած-  
ները հալած իւղի տեղ ընդունում, նմանա-  
պէս հաւանեցին նրա առաջարկութիւնը:  
Վերջապէս Իլիկօն լայտնեց, որ նա մի թան-  
կագին ոսկէ մատանի ունի, կըտանի այն,

գրաւ կը դնի, քսան ըուբլի կը ներկայացնի  
Թաթուլովին, կըստանայ նրանից իր թրի  
տասնապատիկ գինը և կըկին կըթափի մա-  
տանին: Զընայելով, որ կնեազը իր տան մէջ  
եղած բոլոր արծաթէ և ոսկէ իրեղէնները  
արդէն գրաւ էր գրել, բայց այդ մատանին,  
իբրև իր հանգուցեալ հօր յիշատակը, աչքի  
լոյսի պէս պահել էր իր մօտ: Ամենքն ու-  
րախացան, երբ իմացան, որ փողը ճարւում  
է, և սկսեցին «Մրաւալ—ժամիէ» երգել:

—Համա քէփ պիտի անենք հա! բացա-  
կանչեց Կարապետը:

—Հէնց հիմիսկևեթ տանենք գրաւ դը-  
նենք մատանին ու գնանք Թաթուլովի մօտ,  
—ասաց Նիկօն:

—Ուրա!—բացականչեց Դաթիկօն:

—Նա ինձ շատ չարչարեց,—ասաց Իլի-  
կօն հպարտութեամբ, —Հիմի ես նրա գլուխը  
մի օյին կըբերեմ, որ իրա հօր հարսանիքը  
մտաբերի:

Իլիկօն շուտով հագաւ շորերը, վերց-  
րեց մատանին և, ձեռքերը դարսած յե-  
տև, գլուխը բարձր բռնած, աչքերը հան-  
դիսաւոր կերպով չռած, սկսեց հպարտ-հպարտ  
անց ու դարձ անել սենեակում: Ընկերների  
ամեն մի «ուրայից» կամ ուրախութեան բա-

ցականչութիւնից յետոյ, նա աւելի էր ձրգ-  
ւում և ոգևորւած քալիերը շտապեցնում:  
Երբեմն նա ոլորում էր բեղերը, կանգ առ-  
նում և ինքնաբաւականութեամբ կըկնում.

—Դիտէք թէ ով եմ ես? հը! ինձ կնեազ  
Իլիկօ Բոզբաշիձէ կ'ասեն!

Իսկ այդ ժամանակ Կարապետը աւելաց-  
նում էր.

—Կնեազը պերւի սօրտ է, պերւի  
սօրտ!

## VI

Իշխանը շարունակ անցուդարձ էր անում,  
երբ Նիկօն ասաց.

—Իլիկօ ջան, կ'ասես՝ ախպէր, առ քո  
քսան մանէթը, ներողութիւն, որ էսքան  
ուշացը, քոնը քեզ, իմն ինձ:

—Ես գիտեմ, Նիկօ ջան, ես խամ չեմ:

—Կնեազը գիտէ, նա խամ չէ! ընդմի-  
ջից Կարապետը:

—Երբ որ կ'ասի, թէ կորցրել եմ, կ'ա-  
սես թէ՝ բեհեսաբ նամազուլ ես արել, էս  
սահաթիս իմ շաշկէն գտիր, թէկուզ գետնի  
տակից հանիր, թէկուզ երկնքից վէր բեր,  
թէկուզ ստեղծիր!

—Ես գիտեմ, Նիկօ ջան, ես խամ չեմ!

— դարձեալ պատասխանեց Իլիկօն:  
— Կնեազը գիտէ, նա խամ չէ! ընդմի-  
ջից դարձեալ կարապետը:

— Զէ, էդպէս լաւ չէ, Իլիկօ, — ասաց  
Դաթիկօն, — Հէնց որ ասաց՝ թէ կորցրել եմ,  
էն սահաթին մնաք բարով ասա ու միթօմ  
թէ սուդն ես գնում:

— Ես գիտեմ, ես խամ չեմ! Հը! ինձ  
կնեազ Իլիկօ Բօղբաշիձէ կ'ասեն!  
— Ես ու իմ Աստւածը, որ պերւի  
սօրտ է!

— Դու ինձ լսիր, Իլիկօ! Երբ որ կ'ասի  
թէ կորցրել եմ, կ'ասես՝ թէ իմ շաշկի մա-  
զանդէն հարիւր թուման է:

— Ես գիտեմ, ես խամ չեմ!

— Կնեազը գիտէ, նա խամ չէ!  
— Զէ, դու ինձ լսի, Իլիկօ ջան! — ասաց  
Դաթիկօն. — Երբ որ նա կը տեսնի, որ գնում  
ես սուդը, Հէնց ինքը կըխնդրի, որ մի բանով  
դու համաձայնես:

— Ես գիտեմ! պատասխանեց Իլիկօն և  
դարձեալ ձգւած անց ու դարձ անելով. — Ես  
Երեխալ չեմ!

— Կնեազը գիտէ, նա Երեխալ չէ!  
— Կարապետ ջան, — շարունակեց Իլիկօն  
մի փոքը կանգ առնելով, — մի օլին բերեմ

նրա գլխին, մի էնպէս նեղ տեղը գցեմ, որ  
մազերդ բիզ-բիզ ցցւեն:

— Էհ, ուր է, կնեազ, պատասխանեց  
կարապետը, տխուր-տխուր ձեռքը շփելով  
մերկ կատարին, — իսկի մազ կալ, որ բիզ-  
բիզ ցցւի?

— Իլիկօ ջան, — շարունակեց Նիկօն, —  
երբ որ կ'ասի՝ թէ կորցրած շաշկի տեղ ու-  
րիշը կ'առնեմ, կամ թէ ուրացաւ, էն ժա-  
մանակ ձեռքդ էսպէս պինդ կըխփես ստո-  
ւեն ու կ'ասես՝ թէ ես վկաներ ունեմ, իմ  
շաշկի մազանդէն հարիւր թուման է, էս  
սահաթիս տուր!

— Ես գիտեմ, ես խամ չեմ!

— Կնեազը գիտէ, նա խամ չէ! նրան էք  
ուզում բան սովորացնել?

— Իլիկօ ջան, — ասաց Դաթիկօն, — ասել  
եմ ու հիմի էլ եմ ասում՝ Հէնց որ ասեց՝ թէ

կորցրիլ եմ, դու սուդի անունը տուր:

— Համա, կնեազ, ըլփափկես հա, —  
զգուշացրեց կարապետը, — թէ չէ նա մի քիչ  
մարդու կակուղ դամարից բռնել գիտէ:

— Հը! Ես նրան փափկել ցոյց կըտամ!  
Ես նրա դամարը էնպէս պնդացնեմ, որ թա-  
մամ բարաբանի պալկա դառնալ:

— Համա, կնեազ, թէ իմ պատիւս չի-

մացար է, Աստւած գիտենալ, ես էլ ձեր  
շէմքին ոտք չեմ դնի! ասաց Կարապետը:  
—Հեշտ է, հեշտ է! պատասխանեց  
Իլիկօն:  
—Մի լաւ քէփ կըսարքենք, բաւական  
չէ քեզ? հարցըրեց Դաթիկօն:  
—Քէփ, քէփ! գոչեց Նիկօն.—քէփ իրա  
սազանդարով!  
—Քսան թունդի Կախէթի գինով,—ա-  
ւելացըրեց Նիկօն:  
—Իրա Սաշկա-Մաշկով! աւելացըրեց Կա-  
րապետը:  
—Է՛, շենիկիճիրիմէ!  
—Դէ, տղերք, գնանք! ասաց Իլիկօն և  
առաջ ընկաւ:

Ամենքը դսւրս եկան Բօզբաշիձէի յետե-  
ւից: Կնեազները առաջ ընկան և իրանց քայ-  
լերը ուղղեցին դէպի քաղաքային լօմբարդը:  
Իլիկօն վախենում էր մատանին գրաւ դնելու  
մասնաւոր տեղերում, որ մի գուցէ թրի  
պէս նա էլ կորչի: Կնեազները գնում էին և  
ճանապարհին դարձեալ խորհրդակցում: Իսկ  
Կարապետը մի քանի քայլ հեռու հետեւում  
էր նրանց: Նա փողոցի մայթի վրայ այնքան  
սպասեց, որ Իլիկօն իր ընկերներով դուրս  
եկաւ լօմբարդից: Կարապետը շեղեց իր ճա-

նապարհը դէպի մի խուլ անկիւն, իսկ կնեազ-  
ները գնացին դէպի Թաթուլովի խանութը:

## VII

—Օ՛, բարով էք եկել, կնեազներ! Հա-  
զար բարով! ոնց էք?... այ տղալ, կնեազնե-  
րի Համար սկամի բեր!... նստեցէք! ուրիշ,  
ինչ բարին հարցնենք?—Ալսպիսի խօսքերով  
դիմաւորեց մեր կնեազներին Իսայ Մարկարիչ  
Թաթուլովը խանութում:

—Վահ, կնեազ?—դիմեց նա Իլիկօնին,—  
Աստւած ոչ անի, խօմ հիւանդ չես?

—Ոչ! պատասխանեց Իլիկօն Հպարտու-  
թեամբ:

—Ինչի, կնեազ, մի կիրակի օր, էդպէս  
կամպան իով չէք գալիս մեր տուն, որ մի  
քիչ ժամանակ անցկացնենք? շարունակեց Թա-  
թուլովը:

—Վախենում է, գիտես, շշնջաց Նիկօն  
Դաթիկօնին,—տես ոնց է գլխին եղ քսում:

—Ժամանակ չ'ունենք! պատասխանեց Ի-  
լիկօն նոյն հպարտութեամբ:

—Վահ! քէփի Համար էլ ժամանակ  
չ'ունէք?

—Իլիկօ, մի ուշացըրու, —շշնջաց Դաթի-  
կօն՝ յետևից կամաց հըելով:

— Են օրը էլի եկել էիր մեր տուն, չը-  
դնջացար, Իսայ Մարկարիչ! ասաց Իլիկօն:

— Հա, զորթ լաւ միտս գցեցիր, կնեազ  
ջան. էդ ինչ թաւուր ծառալ ես բռնել, թա-  
մամ հայւան է եղել, աշխարքիս երեսին նա  
իմկի բան չի գիտի... սաղ մէկ սահամթ իրա  
«չըգիտեմ ու չըգիտեմով» զահլաս տարաւ:  
Նիկօն և Դաթիկօն խորհրդաւոր կեր-  
պով ժպտացին, իսկ Իլիկօն պատասխանեց.

— Նոր եմ բռնել, դեռ խամ է... Հա,  
Իսայ Մարկարիչ, մենք երկար չենք կարող  
էստեղ մնալ, ժամանակը թանկ է:  
— Խօսք չըկայ, որ ժամանակը թանկ է,  
պնդեց Թաթուլովը, — ինչ դու լուզ ունիս,  
հրամացիր...

— Իլիկօ, կարճ կարեր! յետեից կամաց  
22նջաց Նիկօն:

Այդ րոպէին միամիտ և անմեղ գէմքով  
ներս մտաւ կարապետը, որ տեսնելով կնեազնե-  
րին՝ զարմացած բացականչեց: — միզիթիար  
— Վահ, կնեազներ! էստեղ ինչ էք շի-  
նում... Բարով, Իսայ Մարկարիչ, առուտութեղ  
ոնց է?

— Է՛, կարապետ ջան, առուտութեղը ով է  
տւել... ձեռքը էնքան շատացել է, որ ծերը  
ծերին ձլիւ ենք. հասցնում:

— Եսէնց անց էի կենում, — շարունակեց  
կարապետը, — ասի, էսօր Իսայ Մարկարիչին  
չեմ տեսել, գնամ տեսնեմ ոնց է... դու մի  
ասիլ, կնեազներն էլ էստեղ են եղել... սեկ-  
րետ խօմ չունիք, կնեազներ? թէ ուզում էք  
ես գնամ...

— Զէ, սեկը ետի ոչինչ չըկայ, — պատաս-  
խանեց Իլիկօն. — Իսայ Մարկարիչ, ես շաշկի  
համար եմ եկել:

— Որ շաշկի? ասոց Թաթուլովը վախե-  
ցած:

— Ուրանում է, գիտես? շնջաց Նիկօն  
Թաթիկօին: — Եդ ինչ խաթար է՞՞ մէջ մտաւ կա-  
րապետը, — իմ արևալ վկայ, ոչինչ չեմ հասկա-  
նում:

— Ինչպէս թէ որ շաշկի իրոխտաց Ի-  
լիկօն, փողերը հանելով գրանից. — Է՞ն շաշ-  
կի համար, որ քեզ մօտ դրաւ եմ դրել...

— Հա, դէ էդպէս ասա դաւ ասոց Իսայ  
Մարկարիչը, — ես էլ ասեմ, թէ էդ ինչ շաշկի  
սմագին է խօսում կնեազը. Հա, գիտեմ, գի-  
տեմ...

— Թու գնալ գալով զահլաս տարեցիր,  
շարունակեց Իլիկօն, — Հիմա փողերդ կարող ես  
ստանալ ու իմօապրանքը յետ տալ:

— Վահ, պատասխանեց Թաթուլովը, — իմ գնալդալով գանա բեղամաղ էիր լինում... տեսնում էի, որ մոռանում ես, շուտ-շուտ գալիս էի, որ պարտքդ միտքդ զցեմ. էլ էդտեղ ինչ կալ բեղամաղ լինելու:

— Հը, չեմ գիդի! ասաց Կարապետը:

— Տեսնում ես Նիկօ, թէ բանը ոնց է երկարացնում? շնչաց Դաթիկօն:

— Առ, էս քո քսան մանէթը! ասաց կոպտութեամբ Իլիկօն և փողերը շպրաեց Թաթուլովի առաջ. — իմ շաշկէն էս սահաթիս բեր!

— Վահ, էլ ինչ ես չարանում, հէր օխնած? ասաց Թաթուլովը՝ փողերը համրելով, — թաման քսան մանէթ է... շնորհակալ եմ, կնեազ, հիմի շաշկէն բերեմ էլի?

— Այո, էս սահաթիս, որտեղ որ է, գըտիր, գետնի տակից հանիր, երկնքից վեր բեր, ստեղծիր! խրոխտաց Իլիկօն:

— Վահ, էլ ինչի եմ երկնքից վեր բում ու ստեղծում... վահ, ինչ մեծ-մեծ ես բղաւում, կնեազ!.. էսքան ժամանակ է փողսուշացրել ես հերիք չէ, հիմի դու ես գլխիս բղաւում... չես կարալ մի քիչ կամաց խօսի? ումն ես վախեցնում քո բղաւելով? Կամ թէ ինչ հարկաւոր է աւելորդ խօսքեր... փողերս

բերել ես, շատ բարի, ես էլ քո ապրանքը էս բոպէիս յետ կը տամ... Թաթուլովը գնաց խանութի յետեւ և խկոյն բերեց թուրը:

— Համեցէք, էս էլ քո շաշկէն:

Սմենքը մնացին ապշած: Իլիկօն շաշկէն վերցրեց, նալեց, զննեց — իսկ և իսկ նրա շաշկէն է:

— Տօ, քաշալ! տօ խաբեբալ! գոչեցին կնեազները և յարձակւեցին Կարապետի վրայ, — բաս դու ասում էիր, թէ շաշկէն կորել է!..

— Աստւած, երկինք, գետին, որ ես մեղաւոր չեմ! գոչում էր Կարապետը, պաշտպանւելով կնեազների յարձակումից. — Ճեր արեւ ու իմ արեւ, որ ես մեղաւոր չեմ... Իսայ Մարկարիչն ինձ ասեց, թէ կորցրել եմ... Այ, իրան հարցրէք, չէք հաւատում իրան հարցրէք!

— Ախպէր, Կարապետը մեղաւոր չէ, մէջ մտաւ Թաթուլովը. — կնեազ, շատ խնդրելուց վախեցալ, որ լեզուս մաշւի, ասի, ոնց անենք, որ փողս դուրս գլեմ քեզանից. շատ փիքը արի ու ասի՝ արի խաբարբգան Կարապետի ականջը զցենք, որ միթոմ շաշկէն կորցրել եմ... Նա էլ խաբարը բերել է քեզ. դու էլ իմ փողը բերել ես... էհ, շնորհա-

կալ եմ, կնեազ... շաշկէդ վերցրու, գնա ու  
սրանից յետոյ էլ պարտքդ չ'ուշացնես:  
Կնեազները շւարած ու քօռ ու փոշման  
դուրս գնացին:

ԱԱՏԱՆԱՅ ԲՈՆՈՂՆԵՐ

1

—Фեуаш!, феуаш! збу իմանում, քա? Феуаш!...

—Ով է? —ձայն տւեց քնաթաթախ Թաթոսովը իր ննջարանից:

— Իս իմ, իս... Հենց դուն ապօխ, մէ  
դուռը չուստ բաց արա՝ խիստ հարկաւուր բան  
ունիմ քիզ մօտ!... — շունչը կտրւած պատաս-  
խանեց դռան յետևից Թաթոսովի զոքանչը,  
պառաւ. Սալոմէն:

Թաթոսովը իսկոյն վեր կացաւ իր ան-  
կողնուց, խալաթը հագաւ, լամպարը վառեց  
և գուռը բաց արաւ։ Նրա աւաշ յայտնւեց  
Սալոմէն գիշերային շապիկով, ոտաքոքիկ, խի-  
նաբանդով գլուխը կապած։ Երկիւղից Սալո-  
մէի դէմքը գունատւել էր, իսկ շրթունքնե-  
րը գողգողում էին։

—Վահ, ինչ խաբար է, վուր ես կես-

գիշերին ինձ զարթեցնում իս?—ասաց Թաթոսովը զարմացած,—հէր օխնած, սաղ քաղաքը քնած է, մագրամ դուն էստի ման իս գալի:

Սալոմէն փոխանակ պատասխանի, տատանւեց և գլորւեց բազկաթոռի վրայ:

—Զուր!...

Ալլայլւած Թաթոսովը սեղանից իսկոյն վերցրեց ջրի շիշը, բաժակը լցրեց և մօտեցրեց իր զոքանչի բերանին: Երբ Սալոմէն մի փոքր ուշքի եկաւ, Թաթոսովը ուզում էր գնալ իր կնոջ ննջարանը և զարթեցնել նըրան, բայց զոքանչը արգելեց իր փեսին, որ նա անհանգիստ չ'անի իր կնոջը՝ նինօին, և փոքրիկ երեխաներին:

—Գնամ, կանչեմ նինօին, դէղի ջան, վուր քիզ օտկինք, դուն հիւանդ իս:

—Զէ, չէ, փեսալ ջան, իս հիւանդ չիմ... Նրան մի զարթեցրու, թէ չէ ջահիլ է, կու վախենալ...

Թաթոսովը մնացել էր շւարած. նա չըդիտէ՛ թէ նինօն ինչից պիտի վախենար:

—Ախար մէ ասա, տեսնիմ՝ ինչ խաբար է?

—Աեղուս... չի պտտում, —պատասխա-

նեց Սալոմէն սարսափած, —գնանք, վուրիթի, գնանք ինձ հետ...

—Ուր գնանք? ինչ անենք? ինչ խաբար է? Մէ ասա է!..

Սալոմէն դարձեալ տատանւեց և թուլացած ընկաւ բազկաթոռի վրայ: Յետոյ մի փոքր ուշքի գալով, սկսեց լալ ու խաչակընքել:

—Հալլբաթ խիլքը կորցրիլ է պառաւը, —մտածեց Թաթոսովը:

—Իս էն օթախումը էլ չիմ կանալ քընի, —ասաց Սալոմէն, —իս կու մեռնիմ և էնդի չիմ քնի... ալ, ալ, լում իս շան օռնոցը?... Տէր Աստուծ, օքմին պիտի մեռնի էս տնեմէն!...

—Գեղի ջան, գնա, քնի, վունչիչ չըկայ, —խրախուսում էր Թաթոսովը իր զոքանչին, —շան աղաթն է՝ կ'օռնալ էլ, կու հաջի էլ: Եղ թաւուր անմիղ բանիրով սիրտդ մի շուռ բեր, գնա, գնա քնի!

—Բաս էն անիծւած սատանէքը ինչի ին էկի միր բաղչումը?—ասաց Սալոմէն և դարձեալ սկսեց խաչակնքել:

—Ինչ սատանէք, ինչ քաջքեր, ինչ Փստան? Հալլբաթ էրազ իս տեհի!...

—Ինչ էրազ! իս էս նիմուտին իմ աշ-

քով տեշալ նրանց միը բախչի պատի տակին...  
մէկը սիպտակ չարսաւ ունէր ծածկած, մէկն  
էլ սիւ շուլիրով, լոնդի պուզիրով ու էրկէն  
պոչով պպըզիլ էր պատի տակին ու ինչ որ  
փսփսում.. կինաղամ լեղիս պատռւիլ էր!

—Վահ, դրուստ իս ասում?

—Գնանք իմ օթախը ու ինքդ տիս!—  
ասաց Սալոմէն և գոշգողալով բռնեց իր փե-  
սի ձեռքը:

Թաթոսովը, հպատակւելով իր զոքան-  
չին, ապշած ու բերանը բաց հետեւց նրան  
և մտաւ նրա ննջարանը:

## II

Սալոմէն իսկապէս իր փեսի տանը չէր  
ապրում: Նա թիֆլիսի Չուզուրէթ թաղում  
իր սեփական բնակարանն ունէր, ուր ապ-  
րում էր իր տղայի և հարսի հետ միասին:  
Սակայն հաշտ չէր ապրում Սալոմէն իր  
հարսի հետ: Հենց սև կատուներ էին, որ  
անընդհատ անցնում էին հարսի և սկեսուրի  
միջով: Սալոմէն, սև կատուներից հուշտ լի-  
նելով, յաճախ թողնում էր իր տունը և  
շաբաթներով տեղափոխում իր փեսի մօտ  
ապրելու այնքան, մինչեւ որ անցնում էր  
նրա գլխից սև կատուների մտապատկերը:

Իսայ Իսայիչ Թաթոսովն էլ լաւ պատռում  
ու հիւրասիրում էր իր զոքանչին: Դրա փո-  
խարէն Սալոմէն իր փեսայի ներկալութեամբ  
գովում, գովաբանում էր նինօին. նա գովում  
էր իր աղջկայ շնորհքը, ձեռնաջուրը, գեղեց-  
կութիւնը, նրա համեստութիւնը, ամուսնա-  
կան հաւատարմութիւնը և այլն: Սալոմէն  
հաւատացնում էր Թաթոսովին, որ ամբողջ  
Թիֆլիսում չի ճարւիլ նինօի պէս աղջկկ, որ  
հողը-ջուրը չի ծնել նրա պէս նամուսաւոր  
տանտիկին: Բայց, չընալելով ալդ գովասանք-  
ներին, Իսայ Իսայիչը այնքան էլ չէր երկը-  
պագում իր կնոջ: Իսայ Իսայիչը նրանցից էր,  
որ, ինչպէս ասում են, ձնուքն ընկածին բաց  
չէր թողնում: Նա թէպէտ մահմեդական  
չէր, բայց մեծ սիրահար էր բազմակնու-  
թեան: Գիշերները նա շատ անգամ ուշ էր  
վերադառնում տուն և, իր կնոջ քաղցր  
քունը չը խանգարելու համար (գոնէ ինքն  
ալդպէս էր հաւատացնում), ինքն իր համար  
առանձին ննջարան էր յատկացրել: Իսայ  
Իսայիչի ննջարանը բաժանւած էր նինօի  
ննջարանից մի ընդարձակ նախասենեակով:  
Ալդ նախասենեակից մի ուրիշ գուռ էր  
բացւում զէպի հիւրասենեակը, որին կից էր  
Սալոմէի ժամանակաւոր ննջարանը: Սալոմէի

Ննջարանի լուսամուտները դէպի այն պարտէցն էին նայում, ուր նա գիշերւայ կիսին հեռւից նկատել էր քաջքերին:

### III

—Այ, այ, էն ծառի տակը մտան!—լեզուպատառ շնչաց Սալոմէն իր փեսին և սկսեց ինքն իրան փնթփնթալ «Հրաժարիմք ի սատանայէ» աղօթքը: Թաթոսովը վախեցած և հետաքրքրութեամբ դուրս նայեց լուսամուտից: Լուսնեակ գիշեր էր: ' ա նայեց դէպի Սալոմէի ցոյց տւած ծառը և ստւերի տակ նշմարեց մի ինչ-որ սպիտակ սաւանով շարժւող կմախք. իսկ նրա կողքին մի սևագգեստ սատանայ: Խսայ Խսայիչի մարմինը երկիւղից սկսեց դողդողալ: Սալոմէն պառկել էր և երկու ձեռքով երեսը ծածկել: Թաթոսովը թէպէտ իր զաքանչից պակաս չէր վախենում, բայց, իբրև տղամարդ, մօտեցաւ Սալոմէին և սկսեց նրա ականջին խրախուսական խօսքեր փսփսալ.

—Ախար, գեղի ջան, ինչի ես վախենում? քաջքն ինչ բան է, վուր էտենց վախենում իս? Ստտանան ինչ է, վուր նրա խաթրու սիրտ շուռ իս բերում? նրանց գլխի տրաքւիլը գիտենայ, մէրաշ էստի չը

գան ու ինձ վախեցնին!... Դուն վուր էստի մենակ չը մնայիր, իս էս նիմուտին կըգնալի, էրկուսին էլ շան պէս թրև կու տայի ու Քուռումը կու խիզգէի... Աստուծ գիդենայ, ջոխին կու առնիմ ու էրկուսին էլ էնենց քօթակ կու տամ, վուր մինչի Սողանլուղ մէկ կու փախչին! ինձ ճանչնում իս? ինձ պերսի գիլդի կուպէծ Թաթոսով կ'օսին!... Իս զաբուլ չիմ անի, վուր սատանէքը միր բախչումը դիւիր գան, իմ երեխերքին ու օղուշաղին վախացնին... Դեղի ջան, մի վախենար, սիրտդ զայիմ պահի... Վահ, վահ, վահ! մէ գէնը մտիկ արա է! Էն հառամզադէքը մէկպմէկու պաչ ին անում...

Սալոմէն գլուխը բարձրացրեց և զարհուրած դէպի դուրս նայեց: Այդ բոպէին քաջքերը աներևութացան: Թաթոսովն և նըրա զոքանչը երկար նայեցին, բայց քաջքերը չքացել էին:

—Տէր Աստուծ, քի փառք! —ասաց Սալոմէն, երկիւղածութեամբ խաչակնքելով երեսը, —էս ինչ օրի հասանք? Վայ միր միդքին, վայ միր միզքին! Այս, դիփ շունն է միզաւուր. թէ նա չ'օռնար, նրանք չէին գալ միր բալչումը:

—Իս էն շանը էգուցեթ գաբանչով

կու սատկեցնիմ,—ասաց մի փոքր սիրտ առած  
Թաթոսովը:

Այդ գիշեր Սալոմէն և թաթոսովը չը-  
կարողացան քնել: Նրանք երկուսով նստած  
պատուհանի առաջ՝ զանազան տեսակ դատո-  
ղութիւններ էին տալիս իրանց տեսածի մա-  
սին և զուտ զուտ դէպի պարտէզը նայում:

—Իս նրա օխտեմէն կուգամ,—ասում  
էր Թաթոսովը,—աբա թող մէ էգուց գիշեր  
էլ միը բախչումը տուն գան, տես՝ վունց  
իմ կինծին տալով, էրկուսն էլ դուս գցում...  
ինձ պերւի գիշեր կուպէծ Թաթոսով կ'օսին...  
Իս նրանց օխտէմէն կուգամ!...

—Նրանց օխտէմէն Սստուձ գայ, վուր-  
թի!—ասում էր Սալոմէն—թէ չէ ադամոր-  
դին նրանց մօտ չի կանալ ջուղաբ տայ:

Սալոմէն և Թաթոսովը պայման կապե-  
ցին, որ այդ գիշերւալ տեսիլքի մասին ոչինչ  
չ'սեն Նինօին, որ մի գուցէ յանկարծ նա  
վախենայ:

#### IV

Սուաւօտեան, թէլի ժամանակ, Նինօն  
նկատեց իր մօր դէմքին մի տեսակ յոդնա-  
ծութիւն և տիրութիւն:

—Գիշերս չիմ կանացի աչքս կպցնիմ,

Նինօ ջան,—ասաց Սալոմէն,—շուգը մէ կըռ-  
նեմէն, բաղլինջնիրը մէկէլ կռնեմէն...

—Մագրամ իս խիստ արմադան քնեցի  
էս գիշեր,—ընդմիջեց Իսայ Իսայիչը,—կին-  
քումս էնէնց հանգիստ ու արխալին քնած  
ըլ կալի: Դուն վունց, Նինօ ջան?

—Իս էլ լաւ էի քնած, մագրամ շատ  
փիս էրազների մէջն էի,—պատասխանեց Նի-  
նօն,—միթօմ՝ թէ էրազումս մէ ինչ որ զե-  
հէլ տղայ էիլ է ու ինձ ուզում է կմշտի.  
իս էլ զօնտիկովս մէբաշ թրիկացրի զլիսումը...

—Հախն է, հախն էլ—բացականչեց Սա-  
լոմէն:

—Իժում?

—Իժում, — շարունակեց Նինօն,—մի-  
թօմ Իսային վրայ հասաւ ու դաբանչով լս-  
պանեց էն տղին...

—Բաս աչքն էլ չէի հանի!—պատասխա-  
նեց Իսայ Իսայիչը պարծենկոտութեամբ,—  
նա ինչ շուն է, վուր իմ օղուշաղին բեգա-  
մազ անի!

Սայ երազը Նինօն իրանից յօրինեց, որ  
փորձի իր մարդու խանդոտութիւնը:

—Մենակ տղին կի չէ, — շարունակեց Թա-  
թոսովը,—քիզ էլ կու սպանէի նրա հիդ, թէ  
գուն էլ դաբուլ անէիր նրա կմշտիլը:

— Իս էն թաւուր աղջիկ չիմ մինձացըի,  
վուր սալախանէքի թայ գառնայ, — ընդմի-  
ջեց Սալոմէն, — էսքան ժուկ է ջեր օչով իմ  
աղջկան գէթ չի արի...»

— Դուն էլի գովեցիր քու աղջկան? — ա-  
սաց ժպտալով Իսայ Իսայիչը:

— Հալլաթ գովասանքի արժանի է, վուր  
գովում իմ, — պատասխանեց Սալոմէն:

Թուրքը իրա մածնին թթու չի ասիլ, —  
նկատեց Իսայ Իսայիչը ժպտալով:

— Գիշի, գիշի! — պատասխանեց Սալո-  
մէն, մէբաշ իմ նինօն էլ թթու մածուն ըլ-  
դառնայ... Աստծուն փառք պիտի տաս, վուր  
նինօխ պէս հալալ կաթնակեր է քի ուստա-  
էկի: Դու սրա դադրը ջեր չիս գիտի, վուր-  
թի, ջեր ջեհէլ իս... Այ, Մախոխովի կնկանը  
տիս՝ ինչ օյին է բերում իր մարդու գլխին:  
— Էդ վուր Մախոխովի կնիկը? — մէջ մտաւ  
նինօն:

— Այ, էն վուր իր մարդուն քնացնում  
է ու գիշերը իր բճի հետ խունջիկ-մունջիկ  
անում:

— Վա, էգեբա քու աղջիկն էլ նրա վը-  
քէն ուփրօ փաթթար է! — նկատեց Իսայ Իսա-  
յիչը ժպտալով:

— Հա, վունց չէ! քիմէն թաքուն տասը

ջուխտ սիրեկան իմ պահում, — պատասխանեց  
նինօն նեղացած:

— Վայ, Աստուձ վուչ տնի! Աստուձ վուչ  
անի, վուրթի! — ասաց Սալոմէն:

Թէյից յետով Սալոմէն համբուրեց իր  
երկու փոքրիկ թոռներին, մնաք բարով ա-  
սաց իր աղջկան ու փեսին և գնաց իրանց  
տուն:

— Իս էլ բազարուծը բան ունիմ, — ասաց  
Թաթոսովը և տանից դուրս գնաց:

## V

Իսայ Իսայիչը, փողոցում պատահելով  
իր երկու բարեկամներին՝ Դամբուլովին և  
Թաթուլովին, պատմեց նրանց նախորդ գի-  
շերւայ գէսլքը: Նրանք ոկտեցին ծաղրել Թա-  
թոսովին և ծիծաղել նրա վրայ:

— Քաջքիր կի չէ, — վուտնիր! — ասում է.  
ին նրանք, — ով գիտի սարսադացիլ իս ու աչ-  
քումդ բանիր ին էրևացի... ան էգեբա միզ  
իս սարսադ ճանչնում, վուր էդ լանգի սար-  
սադ բանիր իս ասում... էէէ! իսիլքի արի,  
տօ!

Ալստեղ Թաթոսովը մանրամասն պատ-  
մեց, նկարադրեց իր տեսածը, երդւեց իր ա-  
րեսով և վերջոյ հաւատացրեց իր բա-

քեկամներին։ Դամբուլովը ու Թաթուլովը մը  
նացել էին ապշած։

— Ով գիտի, աշխարհն է, կու պատահի,  
— ասաց Դամբուլովը, — օղորմած հոգի իմ  
մամէն իրա աչքով տեհիլ էր բռնած սա-  
տանին...

— Փիէ! իժում?

— Եդ սատանէն թուրմէ ամեն գիշեր  
գալիս է, նստում միը ձիու վրէն, քշում, քը-  
շում, քրանեցնում ու էլի բերում, կապում  
է գոմումը...

— Փիէ! իժում?

— Իժում իմ մամէն էլ մէ ջեր ձիու մէջ-  
քին կուպը է քսում ու վունց որ չի նստում,  
էնէնց էլ կպչում է ձիու մէջքից ու կուպ-  
րեմէն էլ չի կարում ալուկ գալ...

— Փիէ! իժում?

— Իժում իմ մամէն կետին տռնում է  
ու էդ սատանին էնքան քօթակ է տակի,  
վուր խիղճը իր էկած ճամփէն մոռանում է...

— Վահ!

— Իմ արիւը!

— Իմ պարզեգէն էլ, սկսեց Թաթուլո-  
վը, — իր աչքով սատանի հարսնիք է տեհի...  
միը բախչօի զոքանչն էլ իր մարդու մեռնե-  
լու գիշերը աեհիլ է մի ինչ որ սիպտակ չար-

սաւով հրիշտակ, վուր թուրմէ էկիլ էր նըն-  
ջեցեալի հոգին տանելու։

— Վահ!

— Իմ արիւը!

— Մաշ վունց անինք, վուր միը բախչի  
սատանէքի օխտեմէն գանք? — Հարցըց Թա-  
թուլովը։

Երեք բարեկամները, երկար ու բարակ  
խորհրդակցութիւններից յետոյ, վճռեցին, որ  
այդ գիշեր երեքով միասին հետամուտ լի-  
նեն, կուպը քսած պարանով որսան քաջքե-  
րին ու մի լաւ ջարդեն։

— Իժում վայ թէ էն անիծածնիրը  
մէ բաշ վրայ ննգնին ու հոգիներս հա-  
նին?

— Թէ վուր մէ-մէ հատ ասեղ ցցինք ար-  
խալուխներիս մէջ, էն վուրիտը չին կանայ  
միզ մօտենալ։

— Հա, զուրիժ է, էն մօւնդըիկները պող-  
ւատից խիստ ին վախենում։

— Մաշ իս թոկին կուսը կու քսիմ ու  
հաղիը կու անիմ, — ասաց Խալի Խալիչը, —  
էս գիշեր սահաթի էրկուսին, իփոր ամենքը  
քնած կ'ուլին, իս ձիզ մուլափ կու տամ. պա-  
գեզդի դուռն էլ բաց կու թողնիմ ու դա-  
բանչն էլ մօտս հադիր կու պահիմ։ Դուք  
բանչն էլ մօտս հադիր կու պահիմ։ Դուք

Էլ մէ-մէ հատ եարաղ վի կալէք՝ ան բե-  
բուդ, ան խանջալ...

— Լաւ կ'ուլի, լաւ կ'ուլի. սահաթի եր-  
կուսին!

Դամբուլովը և Թաթուլովը մնաք բա-  
րով ասացին Խսալ Խսալիչին և հեռացան:

## VI

Կէս գիշեր էր: Լուսինը՝ հանդարտ լո-  
զալով ամպերի միջին, արծաթ շողքերը թա-  
փել էր ողջ Թիֆլիսի վրայ: Խորին լուսթիւն  
էր տիրում ամեն տեղ: Թաթոսովի շունը,  
գլուխը վեր էր բարձրացըել դէպի երկինք,  
նայում էր լուսնին և անդադար օւնում: Խ-  
սալ Խսալիչը իր երկու բարեկամների հետ մի-  
ասին տան պատուհանից դիտում էր պարտէ-  
զը: Ա. Հա պարտիզի խորքում երեաց նախորդ  
գիշերւայ սպիտակ չարսաւով կմախքը, իսկ  
նրա կողքին սևազգեստ սատանան: Դամբու-  
լովի, Թաթուլովի և Թաթոսովի մարմնով մի  
սարսուռ անցաւ: Երեք բարեկամները մէկզ-  
մէկու քաջալերելով, խաչակնքեցին և, մի-մի  
ասեղ ցցելով իրանց զգեստի վրայ, առան  
կուսրած պարանը և զգոյշ քալերով դէպի  
պարտէզն իջան:

— Են հառամզադին մտիկ արա է, շը-

շնջաց Թաթոսովը իր ընկերներին,—ասես՝ ա-  
փեցար ըլի!

Երեքն էլ մտան մօտակայ թփի ետև և  
սկսեցին ականջ գնել: Սակայն քաջքերի խօ-  
սակցութիւնը չէր լսւում, որովհետև նրանք  
միմեանց հետ կամաց շնջում էին:

— Դուք էտի դաբանչէքը ու թոկը հա-  
գիր պահէք, — շնջաց Թաթոսովը — իս էս-  
դանց մէ ձեն տամ, տեհնիմ ինչ ին ասում,  
ան նրանց միտքն ինչ է... Համա մուղայթ-  
կացէք, վուր վախչելիս մէ բաշ թոկը վեզ-  
ները գցինք:

Դամբուլովն ու Թաթուլովը հաւանու-  
թիւն տեցին Խսալի Խսալիչի առաջարկու-  
թեան: Թուփը, որի յետև թաք էին կացել  
մեր սատանայ բռնողները, շատ էլ հեռու չէր  
քաջքերից: Թաթոսովը խաչակնքեց երեսը և,  
կծկւելով թփի տակ, ասաց բարձր ձանով.

— Բայրաջողում, ախալէր!

Սև սատանան քարացած մնաց. ըլգիտէր  
թէ որտեղից էր ալդ անսպասելի ձայնը: Իսկ  
ալդ ըովէին սպիտակ չարսաւով քաջքը դող-  
դողաց և կպաւ սև քաջքի կրծքին:

— Ախալէր, թէ դուք դրուստ մարդ իք,  
էստի ինչ ինչ իք շինում էս կէս գիշերին? —  
շարունակեց Թաթոսովը:

Քաջքերը ոչ մի ձայն չը հանեցին։ Նը-  
րանք արձանացած լսում էին։

— Տօ, ձիզ իմ ասում, ալք իք, սատա-  
նալ իք, քաջք իք, թէ ինչ քարուքացախ իք! Եստի ինչ իք շինում? Ում հոգին իք էկի  
տանելու? Էկէք ու լօթիանալ ինձ դրուստն  
ասէք, իս օչովի բան չիմ ասի? Վահ, խլա-  
ցիլ իք? Տօ, չիք իմանում?... Տօ, խանի-խա-  
րաբ, էս վրայ էրկու գիշիր է, ինչ իք թրե-  
գալի իմ բախչումը? Ինչ է, էկիլ իք իմ օղ-  
լուշաղին, իմ էրեխերքին վախացնի? իժում  
ինձ ճանչնում իք? Իս պերւի գիլդի կուպէծ  
Թաթոսովն իմ, գիդիք? իս էն մարդն իմ,  
վուր սաղ դժուխքը վուտիս տակ կ'ուտամ ու  
դիփ ձիր սատանէքի գլուխը խստորի նման  
կու տրորիմ!.. Իս էն մարդն իմ, վուր դիփ  
չար հրիշտակներին, մահիրին խանջալով մէկ-  
մէկ թիքա-թիքա կ'ոնիմ, դիփ կու կոտորիմ,  
կու փշրտիմ, կու խառնիմ մէկզմէկու ու ա-  
ջաբսանդալի կու շինիմ!.. Հառամզադէք!  
պադլեցներ! գարագաւոլ!..

Ալդ ըսպէին լսւեց մի կանացի ճիչ։  
Սպիտակ սաւանով քաջքը տատանւեց և գե-  
տին փռւեց։ Իսկ սե քաջքը ուզում էր փախ-  
չել, երբ լանկարծ թփի տակից գուրս պըր-  
ծան մեր սատանայ ոբսողները, գոռում գո-

չումով վրայ ընկան, կուպրած թոկը գցեցին  
նրա վիզը և սպիտակ քաջքի հետ միասին  
ծառի ստւերի տակից քաշ տւեցին դէպի  
լուսը։

— Վայ, Խսալի ջան! իս մեղաւոր իմ,  
սպանի ինձ! — գոչեց ողբագին ձայնով սպի-  
տակ չարսաւով քաջքը։

Ամենքը ապշած մնացին, որովհետեւ ձայ-  
նը նինօինն էր։ Երբ ամենքը մի փոքը ուշ-  
քի եկան, տեսան որ սպիտակ սաւանի մէջ  
փաթաթւողը իսկ և իսկ նինօն էր, Թաթո-  
սովի կինը, իսկ սե զգեսա հագածը մի ինչ  
որ սպայ էր։

— !!!???

Վ Ե Ր Զ

294

## «Ազգային գրադարան»



NL0243318

Ընթացքը  
1992

ՀՀ Ազգային գրադարան



NL0243321

ՀՀ Ազգային գրադարան



NL0243320

ՀՀ Ազգային գրադարան



NL0243319

